

անանուն ուխտաւորին յիշատակին համար Ս. Փրկչի վանքին մէջ քառակուսի յախճապակիի յիշատակարան մը զետեղել տուաւ սա խօսքերով. « 1479, Անժակօր Ուխտաւորին. F. F. 1925, Մ. Ս. Յ. »:

Այս վերանորոգութենէն 134 տարի վերջ, 1613ին Դրիգոր Պարոնտէր պատրիարքին օրով, վանքին հակառակօրդներէն ու մանք գիշեր ատեն կ'այրեն թէ վանքին և թէ եկեղեցիին գուռները, կը կողոպտեն վանքն ու եկեղեցին: Պատրիարքը և դատաւորը վանք կ'երթան քննութեան համար. կը տեսնեն այրեացաւեր վանքը. դատաւորը բան մը չի կրնար ընել, միայն կը բաւականանայ դործուած փնասները գրի առնուլ և յանձնել պատրիարքին. հակառակ զրացիներէն ոմանք քննութենէն զրգուռած տարբեր հակառակութիւններ կը սարքեն ու կ'ըսեն թէ իրենց նախնիք Սուլթան Սիւլէյմանի կալուածոց վերակացութիւնն ունէին, և զոր կը վարէին ժառանգաբար. կ'ամբաստանէին թէ այն արաբ ուր քրիստոնեայք իրենց մեռելները կը թաղէին՝ մաս կը կաղմեր իրենց վերակացութեան յանձնուած կալուածոց: Դատարան կը կանչեն վանքի տեսուչ Աստուածատուր վրդ. և ուրիշներ, որոնք կը ներկայացնեն իրենց պաշտօնագրերն ու դատաւորը կը հաստատէ գերեզմանատան սեպհականութիւնը: Դրացիները աւելի կը նեղեն պատրիարքը՝ որ կը դիմէ Արքունի Դուռը. կրկին քննութիւն կ'ըլլայ արքունի հրամանաւ. դարձեալ կը հաստատուի գերեզմանատան օրինաւորութիւնը: Դրացիները զրգուռած՝ այս անգամ վանքին պատերը կը ծակեն ու քարերը կը խլեն պատերէն կործանելու համար զայն. գիշերը միաբանք քանդումին ձայները երբ կը լսեն, օգնութիւն կ'աղաղակեն. բայց չարագործները կը փախչին: Դարձեալ քննութիւն կը կատարուի, արդիւնքը անորոշ. միայն թէ պատրիարքին կը պատուիրեն որ վանքին պարիսպները նորոգէ, երկաթէ գուռը դնել տայ տեղը և ամրացնէ բոլոր տեղերը: 1614-15 թուականներուն զրուած պաշտօնագրերէն կը հասկցուի թէ Դրիգոր պատրիարք Պարոնտէր ընդարձակ նորոգութիւններ կատարած է Ս. Փրկչի վանքին մէջ: Դամասկոսի կուսակալին կողմէն յատուկ պաշտօնէի մը կողմէ տեղւոյն վրայ քննութիւն կը կատարուի՝ այս նորոգութեանց մասին ու կը հաստատեն վերաշինութեանց օրինաւորութիւնը: